ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Վկայականներն իրենցից ներկայացնում են կաշվե պատյան, որի մեջ տեղադրված է մետաղանիշը (տարբերանշանը): Մետաղանիշի (տարբերանշանի) տրամագիծը 50 մմ, մետաղի հաստությունը 1,2 մմ, իսկ ուռուցիկ գոգավորության չափը 5մմ: Պատրաստված պղնձի համաձուլվածքից, հատուկ գալվանական մշակմամբ և լաքապատված է: Մետաղանիշի (տարբերանշանի) դիմերեսին պատկերված է ՀՀ Քրեակատարողական ծառայության ռելիեֆային լոգոտիպը, որը ներքևի կողմից եզերվում է դափնու ճյուղերով: Լոգոտիպի գունավորումները կատարվում են համապատասխան գույնի ոսկերչական էմալներով: Վերոնշյալ պատկերները, որոնք տեղակայված են հատուկ ֆակտուրայով մակերեսի վրա, արտաքին կողմից եզերված են շրջանակով, որի մեջ եզրագծին զուգահեռ գրված է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔՐԵԱԿԱՏՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»» գրվածքները: Վերոնշյալ պատկերները տեղակայված են տարբեր հարթությունների վրա: Դափնեպսակների ներքևի մասում ժապավենի մեջ հատուկ տեխնոլոգիայով դաջվում է մետաղանիշի (տարբերանշանի) հերթական համարը: Մետաղանիշը (տարբերանշանը) դարձերեսի կողմից ունի հատուկ պտուտակային ամրակ՝ պատյանին ամրանալու համար: 1. Պատրաստման տեսակի վերաբերյալ պահանջներ Մետաղանիշների (տարբերանշանների) միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը ապահովելու համար դրանք պետք է պատրաստվեն դրոշման ճանապարհով և թվային տեխնոլոգիաների կիառմամբ: 2. Անվանադրոշմում Մետաղանիշի (տարբերանշանի) դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: 3. Կաշվե պատյան Կաշվե պատյանը պատրաստվում է սև բնական կաշվից: Մետաղանիշը (տարբերանշանը) պետք է տեղադրված լինի

	կաշվե պատյանի մեջ, որի չափսերը փակված վիճակում կազմում է 70մմ X 100մմ: Կաշվե պատյանը մեջտեղից բացվում է և բացվող կողմի աջ մասում տեղադրվում է մետաղանիշը (տարբերանշանը), իսկ ձախ կողմում ունի թափանցիկ գրպան՝ անվանական պլաստիկ քարտ տեղադրելու համար: Մատակարարի կողմից մետաղանիշի (տարբերանշանի) 3Դ մոդելավորված նկարները պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Մետաղանիշի (տարբերանշանի) և պատյանի արտաքին տեսքը տես. նկար 1-ում և 2-ում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	